



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
նչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

23057

C19264576

Պրոլետարներ բոլոր լերերների, միացե՛ք

2. ՀԱՐԱԹՅՈՒՆ

ИНСТИТУТ
СЪЮЗОВЕДЕНИЯ
Академия Наук
СССР

ԲԱՏՐԱԿ!
ԿՆՔԻՐ
ՊԱՅՄԱՆԱԳԻՐ



331.1

Z-42

1.0 JUN 2013

«ԳՅՈՒՂԱՅՈՒ ԳՐԱԴԱՐԱՆ»-Ի ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՄԲ

ԼՈՒՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ

1. Ս. Շաղունց — Մեր անելիքները . . . 20 է.
2. Հ. Փիլոսոփայան յեզ Ս. Մելիքանյան. — Ինչպե՞ս
ձևանալու յե գործարանում յուզ և շվեյցարե-
կան պանիր պատրաստելը . . . 2 է.
3. Հ. Փիլոսոփայան. — Սոստորոյսերը և նրանց
մշակութայն յեղանակները . . . 10 »
4. Խ. Ավդալբեկյան. — Հ. Ս. Խ. Հ. Հոգային
Որենսդիրքը, բացատրական հարց ու պա-
տասխաններով, մասն առաջին, աշխատավո-
րական հոգոպատգործություն . . . 40 »
5. Պ. Հեֆիմյան. — Թթենու մշակությունը . . . 10 »
6. Պ. Հեֆիմյան. — Շերամի վորդը, նրա կերակ-
րելն ու խնամքը . . . 10 »
7. Կ. Սելիֆ-Շահնազարյան. — Ծխախոտի
մշակություն . . . 20 »
8. Քրիզոստոմ. — Տասը պատգամ տնտեսագիտի . . . 20 »
9. Խ. Յերեցյան. — Անհատական, թե՛ կոոպերա-
տիվ կաթնատնտեսություն . . . 10 »
10. Հ. Հաբուսյուն. — Բատրակ, կնքիր պայմա-
նագիր (չափածո) . . . 5 »

Մ468 331.1
U 2.42
Cal505

C1926.V576
15 JAN 2010

Գրողները բոլոր յերկրների, միացն'ք

№ 11 (14) ԳՅՈՒՂԱՅՈՒ ԳՐԱԴԱՐԱՆ № 11 (14)

Հ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆ

БИБЛИОТЕКА
ИЛИ СТИТУТА
УСТОИЗВЕДЕНИИ
Академия Наук
СССР

ԲԱՏՐԱԿ ԿՆՔԻՐ
ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

(Սյուժետը ուղեբեկից)

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Հոգովորումատի յեզ Հոդ-անտառ Արհմիության
Կենտ. Վարչության

ՅԵՐԵՎԱՆ

1925

23057

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ
ԳՐԱԴԱՐԱՆԻ
ԿԵՆՏՐԱԼԻ
ԳՐԱԴԱՐԱՆ



56721-66

Դրանից. 89 բ. Պատվ. № 4066. Տիրաժ 10,000.

Տպագրական Տրեստի 2-րդ տպարան

1

Հէյ, ջան տղերք, ջուտ մշակ,
շուրջս յեկեք, շարվեցեք,
հին աշխարհում տանջված բատրակ,
պատմությունս լսեցեք:
Ո՞վ ե քաշել հին որերի
ծանր լուծը տերերի,
ո՞վ ե տանջվել
մեզնից ավել
«սուրբ» ճանկերում տերտերի:
Քյոխվա, գզիր, չավուշ կուլակ,
մեր արյունն են միշտ ծծել,
բուռ ու բուռնցք, փետ-դագանակ
մեր մեջքին են միշտ փորձել:

Բուք ու բորան ցուրտ որերին
շատ ենք յեղել մերկ, քաղցած,
ամառվա են թունդ շոգերին
թոնրի միջին տապակված...

Սև եր ուր խեղճ բատրակի
ու միշտ ել սև կմնար,
թե վոր որենքը «Սավետսկի»
ես մեր աշխարհը չգար,
թե հողանտառ միությունը
մեզ ոգնության չհասներ,
աշխատանքի պայմանագիր
վարձողի հետ չկապեր...

Ականջ արա, բատրակ ընկեր,
պատմությունս լիովին,
տես՝ թե ինչպես քո շառն ու խեր
ցույց կտա քեզ տեղովին:

Իննը տարի բատրակ Պետին
ճառայում եր Կարապետին:
Հանգիստ չկար նրա համար,
գիշեր, ցերեկ միշտ-միալար
հազար տեսակ գործ եր շինում,
ապահ տերը չեր կշտանում...

Կինն ել մարդուց ավելի չար՝
որ ու գիշեր միշտ անդադար
չարչարում եր խեղճ բատրակին,
վոնց վոր յեղը լծան տակին:

Բատրակ Պետին տգետ եր՝ մուլթ,
իր ազան ել՝ չար ու անգութ:
Պայման չկար նրանց մեջը,
ու հայտնի չեր—տարվա վերջը
բան պիտի տա՞ր խեղճ բատրակին

Թե՞ պիտի տար վզակոթին,
դուրս շարտեր մերկ ու տկոթ,
դառ ու դատարկ գլուխը կոր:

Հանգստի որն ու կիրակին
ո՞վ եր տվել խեղճ բատրակին
հերկ եր անում, ցանում, ցաքում,
հունձ եր անում, խուրձը թակում,
ցորեն դիզում վոսկու նման,
մարազն ածում խոտ ու դարման:
Դե, հո քար չեր մեր բատրակը.
եսքան գործին վճնց ղիմանար.
շատ անգամ վոր դուրս գար բակը,
նստեր, վոր քիչ հանգստանար,
աղան իսկույն վեր եր թռչում,
խոզի նման ճզում, ճչում,
հայհոյում եր, ու նախատում,
թե՛ բատրակը չի աշխատում:

—Այ դու թամբալ խոզի զավակ,
ի՞նչ ես նստել անժամանակ:
Հորս խերի՞ն եմ հաց տալիս,
ի՞նչ ես շան պես թավալ գալիս.
քթիցդ գա քո լափածը,
լեղի դառնա քեզ իմ հացը:
Շո՛ւն անդգամ, եսա կգամ,
ենքան կտամ քո գավակին,
աղցան կանեմ փետիս տակին:

Կարապետի կի՛նն ել իսկույն,
վոնց վոր քոլի են բայղուշ բուն,
բղավում եր խեղճի վրա,

Թե—հայ հարա՛,
փետ չի ջարդել,
խոտ չի բարդել,
ջուր չի բերել,
գոմ չի քերել,

գործ չի շինում, ծուլ է, անբան,
հարամ լինի կերածն իրան:

Ու խեղճ Պետին—

աչքը գետին,

գլուխը կախ,

քաշում էր «անխ»,

վեր էր կենում, գնում գործի,

վոր չլսի ձենն եղ ոձի:

Եհ, ի՞նչ աներ անճար Պետին,

նա գերի յեր Կարապետին,

մի փոր հացի ծախված գլխով,

վոտ ու ձեռին դրած բխով:

Ու գեղերում մեր Պետին ի պես
շատ բատրակներ, ահա եսպես,
տանջվում էյին տերերի մոտ՝
մերկ ու տկլոր, ցավ ու դարդոտ.
չունքի առանց պայմանագիր

վարձվում էյին տերերի մոտ,
խակ որենքն ել՝ բյոխվա-զզիր,
կաշառակեր ու անամոթ,
ոգնում էյին միշտ տերերին,
ճնշում էյին բատրակներին:

Բայց աշխարհքում ամեն չար բան
ունի իրա վերջն ու վախճան . . .

3

Ես ժամանակ մեզ աշխարհքում
շատ բան փոխվեց.

Նիկալայը թախտից ընկավ . . .

Բալշիկ,

մենշիկ,

դաշնակ,

հնչակ,

իրար անցան . . .

Սուր, հրացան,

տուր ~ տրաքոց,
 թոփ ու դժփոց,
 ալան-թալան,
 հարան-տարան,
 ինչ վոր տեսան,
 առան, տարան...

Մարդ չգիտեր
 վորն է տերը,
 վորը շառը,
 վորը խերը...

Վերջը վրա հասավ բարին,
 բալշիկն եկավ, նստեց սարին:
 Խուժը-խմբապետ փախան կորան,

վորը Թավրիզ,
 վորը Թեհրան,
 վորը Փարիզ,
 վորը Պուլիս—

ու նոր տեսանք

Մենք բարի լիս:

Աշխատավոր շինականը
 զենքը թողեց իրեն տանը,
 լծեց արորն ու գութանը,
 գործի անցավ,
 ազնւո՞ւ, անցավ...

Գեղը լցվեց հազար բարիք.
 Ել չունեյինք ցավ ու կարիք.
 զիր ու գաղթի,
 մինչ Բայազետ
 հենց են թռչում,
 վոնց վոր դուռը:
 Ու թայ-թուռը—
 ջահել,
 ահել,

գործից հետո շարվե-շարան
 գալիս եյին ընթերցարան,

կարդում, լսում,
ասում, խոսում,
հնից, նորից —
շառ ու խերից:

4

Թե վոնց եղավ, լավ չգիտեմ,
մի շաբաթ որ, իրիկնադեմ
թայ տղերքը Պետին տարան
իրենց գեղի ընթերցարան:

Նայեց Պետին արդ ու զօրդին,
պատին կախած մեծ կարպետին...
— Հը, թնչ խաբար, ընկեր Պետի,
ասավ նրան իր ընկերը,
— տեսնո՞ւմ ես դու են կարպետի
վրան կախած մեծ նկարը.
են Լենինն ե. այ, ես ել տես,

բատրակներ են ինձ ու քեզ պես.
հավաքվել են Լենինի մոտ
ու լսում են խոսքը սրտոտ:
— Դու չգիտես՝ թե Լենինը
ինչ է ասել բատրակներին.
ասել է, վոր թողնենք հինը,
հասկանանք մեր շարն ու բարին:

— Ասել է, թե բատրակները
թող հասկանան իրենց խերը,
ստրուկ չլնեն տերերի մոտ,
ճորտ լինելը մեզ է ամօթ:
— Դրա համար ամեն բատրակ,
բանվոր, ծառա, հովիվ, մշակ,
պետք է գնա իսկույն և յիթ,
պայման կապի իր աղի հետ՝
նոր որենքով, մեր որենքով,
մեր միության մարդու ձեռքով...

— Ու յերբ կապես պայմանագիր,
են ժամանակ, լավ իմացիր,
եւ չի կարող տանջել յերբեր
քեզ քո աղան գիշեր-ցերեկ:

— Միութիւնը Հող-անտառի
կը պաշտպանի քո շահերը
աւ կտեսնես, թե վոնց բարի
մարդ կը գառնա քո չար տերը:

— Բայ, Պետի ջան, Հող-անտառը
գել կուլակին կանի գառը:
Ամեն բատրակ պետք ե մտնի
Հող-անտառի արհմիութիւն,
ենտեղ միայն նա կը գտնի
իրեն պաշտպան ու փրկութիւն:

Շատ բան ասեց իր ընկերը,
ցույց տալ ուզեց Պետին խերը,
բայց ի՞նչ կանես

Պետին եղպես
բան լսել եր,
վոր հասկանար՝
թե վորն ե խեր
ու վորը շառ...

Գնաց Պետին աղայի տուն,
սաղ գիշերը մնաց արթուն:
Միտք եր անում յերկար բարակ,
չափում ձեռով, հաստ ու բարակ,
թե ի՞նչ ասաց իր ընկերը,
լավ կըլի, վոր բատրակները
պայման կապեն աղայի հետ.
չե՞ վոր աղան կը նայի խեթ...

Եղ որվանից անցան որեր,
բայց մեր Պետնի կյանքը են եր—
ինչ վոր տեսանք.

միշտ չարչարանք,
ցավ ու տանջանք,
ու տառապանք:

5

Հէյ, ընկերներ, լավ լսեցէք,
ականջներդ լայն բացէք,
տեսեր թիւ ե խեղճին անում
դեղ ու դարման—խնամում ...

Հողանտառը ամեն գեղում,
մեր աշխարհքի ամեն ծերում
կազմակերպեց բատրակներին
ու չար, անխիղճ կուլակներին
ցույց տվեց, Վոր մեր աշխարհքում
խորհրդային մեր նոր կյանքում,
տեր են հիմա իրենց կամքին
բատրակները՝ տղա թե կին:

Հող-անտառի մարդիկն ահա
պտտում են գավառ ու գեղ,
ուր տեսնում են մի բատրակ կա,
կանգ են առնում իսկույն եղտեղ՝
հասկացնում բատրակներին,
վոր շլինեն տիրոջ գերին:

6

Հող-անտառի հրահանգիչ,
բատրակների կազմակերպիչ
ընկեր Յենոբն, եսպես մի որ,
հենց են գեղը յեկավ, ուր վոր
տեսանք, ինչպես բատրակ Պետին
ծառայում էր Կարապետին:
Յեկավ տեսավ, վոր ես գեղում
բատրակներին շատ են նեղում:
Ժողով կանչեց բատրակներին,

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР



կանչեց նույնպես և տերերին:
 Հավաքվեցին բատրակները,
 տղայք, կանայք, աղջիկները,
 յեկան նույնպես և տերերը՝
 հաստ ու տուփ կուլակները:
 Եստեղ եր և Կարապետը՝
 ձեռին բռնած իր հաստ փետր,
 յեկավ նույնպես և մեր Պետին՝
 ծակ տրեխը իրա փոփին:

Նստան ժողով, ու Յենոբը
 ամուր բռնեց գործի բոբը:

— Ես ժողովում, սկսեց նա —
 ամեն մեկդ թող իմանա,
 խոսելու յեք ազատ, անկախ,
 ձեր ցավերը պատմեք անվախ:
 Խորհրդային մեր աշխարհում,

ինչպես անցած տարիներում,
 ել չի կարող լինել յերբեք
 ահ ու ճնշում, լավ իմացեք:

Ընկերներ ենք մենք հավասար
 ու կաշխատենք իրար համար:
 Քատրակը թող չվախենա
 իր ցավերը պատմելուց,
 վարձողն ել թող լավ գիտենա,
 վոր վախ չկա խոսելուց:
 Մի բատրակ եմ յես ել ձեզ պես
 ու տանջվել եմ ճիշտ ենպես,
 ինչպես դուք եք հին որերին
 գերի յեղել տերերին:

— Անցավ այժմ հին աշխարհքը
 իր խայտառակ որենքով.
 այժմ պետք է մեր բատրակը
 ապրի ազատ, նոր կյանքով:

Անցավ են հին ժամանակը.
միություն կա մեր յերկրում,
ու գորեղ ե մեր բատրակը—
գեղում լինի թե՛ սարում:
—Տեսեք, ահա Հող-անտառը
ղրկել ե ինձ ձեր գալառը,
ղրկել ե, վոր ամեն գեղում,
սարերում թե գործի տեղում,
ծանոթանամ պայմաններին,
կազմակերպեմ բատրակներին:
—Դե, ընկերներ, ազատ խոսեք,
ձեր ցավերը ինձ պատմեցեք:

Ու խոսեցին բատրակները,
վորը ցածում, վորը վերը,
վորը նստած,
վորը կանգնած,
պատմում եյին ու բողոքում,

թե իրենց վոնց են կեղեքում:

Մեկն ասում եր, թե իր աղան
մի տարի յե փող չի տալիս,
մեկը՝ թե իր աղի տղան
միշտ բատրակին ծեծ ե տալիս:
Մեկն ասում եր, վոր քաղցած ե
անց կացնում իր սև ուրը,
մյուսը՝ թե վոտր բաց ե,
ու գրգգգված հագի շորը:

Բայց տերերն ել իրենց հերթին
զանգատվում են Յենոքին,
թե կան ենպես բատրակներ ել,
վոր չեն ուզում աշխատել:
—Պատահում ե, ուղարկում ես,
վոր արտ հնձի բատրակը,
բայց դե գնում ու տեսնում ես,
պառկել ե ծառի տակը:

— Թե խոսու՞մ ես՝ բղավում ե,
քեզ կուլակ ե անվանում,
թե չե՞ս խոսու՞մ հո դադում ե,
ենքան անսիրտ ե բանում:

Ու շատ յերկար

ու անդադար

զանգատվում են իրարից
ու դժգոհ են բատրակներից,
բատրակներն ել՝ տերերից:

Շատ բան պարզվեց մեր Յենոփին

հարցաքննեց ամեն մեկին
ու տեսավ վոր՝ ես գեղի մեջ
իրեն համար գործ կա անվերջ:

Նախ և առաջ նա մտածեց
պայման կապի տերերի հետ.
իրեն ծոցի ջերից հանեց
պայմանագրի մի տպած թերթ:

— Հո տեսնո՞ւմ եք դուք ես թուղթը.
սրան կասեն «պայմանագիր»
թե բատրակը, թե վարձողը
պետք ե գիտնան սա անգիր:

— Սա ցույց կտա յերկուսիդ ել,
վոր ձեր մեջը ծագած վեճը
կարելի յե ենպես հարթել,
վոր ձեր գործը մինչև վերջը
գնա խաղաղ ու անարգել:

— Պայմանագիր պետք ե կապեք,
յերբ վարձում եք կամ վարձվում.
առանց դրան, լավ իմացեք,

միշտ ել կռիվ ե բացվում:

— Այ, յես հիմա բացատրեմ
և ամենքդ ել կը տեսնեք,
վոր վոչ մեկդ չեք լինիլ դեմ,
դուք ել պայման կը կապեք:

—Աշխատանքի պայմանագիր
հաստատվում է յերկու կողմից,
բատրակ, մշակ թե բեռնակիր
ու վարձողն ել իրա կողմից,
ձեռք են քաշում ես թղթի տակ
ու գործ բռնում՝ մաքուր-խտակ...
Պարզ է լինում, թե բատրակը,
վոր մտնում է գործի տակը,
լինչքան պետք է վարձ ստանա,
սա հո գիտեք, մեծ պայման ա:
—Գրվում է, թե վարձվող մարդը
ինչ տեսակ գործ պիտի անի.
Նախի՞ր պահի, հնձի ամրտը,
թե՞ բաղերում պետք է բանի:

Նույնպես նրա ուտելիքը,
քնատեղը, հագնելիքը,
ամեն բան ել իրան կարգին

խոստացվում է մեր բատրակին:
—Հիվանդանում է բատրակը.
յեթե պայման չունի ձեռքին,
դուրս են գցում նրան բակը
ու թողնում են բախտի կամքին:
Բայց, թե պայմանագիր ունեն,
պարտավոր են նրան տանեն
հիվանդանոց՝ բժշկվելու.
տեղ են տալիս նրան անտեղ
հիվանդ վախտը դինջ պառկելու
և ինչքան ել պետք լինի դեղ,
նույնպես ձրի կտան նրան,
մինչև առողջ զգա իրան:

—Հասա յեթե գործի վերջը
բատրակն ուզի գնալ ժողով.
Թե նա չունի թղթի մեջը,
գրած պայման,— ահ ու գողով,

լուռ ու թաքուն պետք է գնա,
 թե չե՝ աղան վոր իմանա,
 վայր տարավ խեղճ բատրակին,
 համը կառնի դագանակին...

— Իսկ թե պայման ունի կապած,
 ով կարող է խոսել վրան.

գործից հետո, ճակատը բաց,
 նա կը գնա ընթերցարան,
 կուզի թատրոն, կուզի ժողով.
 իր վաստակած հալալ փողով
 ինչ վոր կուզի՝ են ել կանի,
 ով կարող է խոսել յանի:

— Հապա կերած կերակուրը՝
 թե վոր գտնի թանապուրը,
 են ել լավ է նրա համար.
 բայց դե աղի կնիկը չար
 ինչ է տալիս խեղճ բատրակին.

ինչ վոր մնա սուփրի տակին:
 Իսկ պայմանը գիտե և եղ.
 սրա մեջը պարզ է գրվում,
 վոր բատրակն ել իր աղի հետ
 մի տեսակ է կերակրվում:

— Պայմանագրում հիշվում է, թե
 յերբ է գործը վերջանում,
 բատրակն ել հո մեզ պես մարդ է,
 շունչ քաշել է ցանկանում:

— Աշխատավարձն ել իր կարգին
 միշտ գրվում է պայմանում,
 թե՝ վարձողը իր բատրակին
 ինչ պայմանով է պահում:

— Այժմ տեսնենք ինչ շահ ունեք
 վարձողներդ պայմանից:
 Պիտեմ, այժմ դուք կարծում եք,
 մնաս կանեք այս բանից,

բայց սխալ ե, լավ մտածեք,
այն ժամանակ կը տեսնեք,
վոր պայմանը աշխատանքի
ձեզ կը բերի նոր կյանքի:

— Ձեք բատրակն ել ձեզ պես մարդ ե,
թնչ անենք, թե նա աղքատ ե:
Նա ել ձեզ պես հաց ե ուտում:
եւ ինչու յե նա աշխատում:
Նա ել ունի ցավ ու կարիք,
կին, յերեխա, տուն, ընտանիք,
առանց հացի ո՞վ կապրի վոր,
չե՞ նրան ել պետք ե լավ շոր:
Թող վարձողը լավ գիտենա,
վոր մեծ սխալ կը գործի նա,
յեթե իրեն ծառայողին
պահի մերկ ու անանկողին:

— Ել թնչ սրտով նա կաշխատի.

պարզ ե, վոր նա գործը կատի,
չի աշխատի ու վարձողը
դուր կը ծախսի իրա փողը:

— Բայց թե կապես պայմանագիր,
են վախտը դու աչքդ փակիր.
բատրակն իրեն գործը գիտի,
ամբողջ սրտով նա կաշխատի,
եւ ասելու կարիք չկա,
գիտե, վոր իր վարձը միշտ կա:
— Իսկ Հող-անտառ միությունը
կը հետևի, վոր բատրակը
լավ կատարի աշխատանքը,
վոր ձեր արտը, խոտն ու այգին
պահպանի նա սարք ու կարգին:
Ե՞նք չենք ուզում, վոր գեղերում
լինի ցավ, սով ու կարիք,
այլ ուզում ենք գյուղ տեղեւում

առաջ բերենք մեծ բարիք:

Պայմանագիր պետք և կապեր,
յերբ վարձում եք դուք բատրակ,
պայմանագիր, լավ իմացք,
գործ և մաքուր և իստակ:

— Ես ել պետք ե լավ իմանաք
ու յերբեք ել չմոռանաք,

վոր անցել են են տարիքը,
յերբ վոր բաղցը ու կարիքը
ստիպում եր խեղճ բատրակին՝
գերի դառնալ կուլակին:

Այժմ փոխվեց ժամանակը,
միություն կա մեր յերկրում
ու գորեղ և մեր բատրակը՝
գեղում լինի թե՛ սարում:

Ու վարձողները շատ լավ հասկացան
վոր հին որերը արդեն անց կացան,

վոր բատրակները մենակ չեն, անգոր,
վոր Հող-անտառը, այդ ուժը հզոր,
պաշտպան և կանգնել նրանց շահերին,
հարված և տվել իրենց զահերին:
Պայմանագրերն եկան մեջ տեղ.

գրեց Յենոբն իրա ձեռքով,
տեր ու ծառա ել միատեղ
ձեռք քաշեցին փեշատի բով:

Կարապետն ել բոլորի պես
պայման կապեց Պետնի հետ.
հացը, վարձը, շորը նույնպես
գրվեց այնտեղ կետ առ կետ:
Թուղթը գրվեց,

փեշատ գրվեց
և ազատվեց մեր Պետին,
եկ նա ճորտ չի՝
վոր ամաչի,

Ել ստորուկ չի նա հետին:
մենակ չի նա, խեղճ ու մենակ,
Ել չի մորթվիլ անդանակ,
անդամ Ե նա արհմիության,
բատրակներ ի միության:

Ել՝ մտել Ե նա Հող-անտառ,
այժմ քաջ Ե, միտքը վառ,
վառ Ե սիրտն ել հուրի նման,
կա աշխատանքի պայման:

Գործի վախտը գործ Ե անում
հանգիստ սրտով ու ազատ,
գործից հետո հանգստանում,
առնում թե համ, թե լազաթ:

Միշտ գնում Ե ընթերցարան
գործից հետո քեֆին իր,
ուր կարդում են, պատմում նրան՝
գիր և գազեթ, հեռագիր:

Սովորում Ե գրել կարգալ
լիկ-կայանում եղ գյուղի,
սովորում Ե ազատ խոսալ՝
առանց վախի, յերկյուղի:

Ճորտ չի հիմա աղի տանը,
այլ՝ հավասար մի ընկեր,
այժմ գիտե նա իր բանը՝
թե ցերեկը, թե գիշեր:

Ել չեն տալիս նրան թերմացք
կամ չոր ցամաք գարի հաց,
այլ հավասար ինչ վոր գտնեն
աղայի հետ են կուտեն

Գոհ են նույնպես և բոլորը՝
բատրակներն ու տերերը,
հավատում են այժմ իրար,
Ել չեն կռվում անդադար:

Ստանում են բատրակները
լրիվ հագուստ, շոր ու փող,

այժմ խաղաղ ե սրտերը,
եւ չեն քաշում մի ու դող:

Հեյ, լսեցիք, դուք ընկերներ,
դեռ ելի շատ բատրակներ
չարչարվում են կուլակի մոտ
մերկ ու տկլոր ու դարդոտ:

Բնավ ե, այժմ որն ե հասել
բատրակների փրկության,
մենք բորորս, ձեզ հետ յես ել —
պետք ե դիմենք միության.

Միանում են վողջ աշխարհում
բանվորները քաջարի
միանում են, ուժը լարում,
հասնում հազար հազարի:
Միանում են բաղաք ու գյուղ
ճնշվածները աշխարհի,
կռիվ մղում հաղթ, անյերկյուղ՝

Թույնը թափում վոխերի:
Մենք եւ գնանք բոլորի հետ
հաղթ բանակը բանվորի,
միջազգային բանակն ե եդ՝
հազարների, բոլորի...

Մեկը թույլ ե, տկար, անզոր,
իսկ հազարը՝ հաղթ-հզոր,
հազարներով մենք միանանք,
մեր վաստակին տիրանանք:



ՏՊԱԳՐՎՈՒՄ ԵՆ ՅԵՎ ՇՈՒՏՈՎ ԼՈՒՅՍ ԿՏԵՍՆԵՆ

1. Մ. Թուվանյան. — Շարքացանը և նրա նշանակությունը (10 նկարով)
2. Խ. Տեր-Ներսիսյան. — Ինչպես պետք է մշակել խաղողի օղիները (28 նկարով)
3. Խ. Յերիցյան. — Կաթնատնտեսության գործնական ձեռնարկ, մասն առաջին (64 նկարով)

ՊԱՏՐԱՍՏՎՈՒՄ ԵՆ ՅԵՎ ՀԵՏՉՀԵՏԵ ԿՀԱՆՁՆՎԵՆ ՏՊԱԳՐՈՒԹՅԱՆ

1. Սերմազտման անհրաժեշտությունը և սերմազտիչ մեքենաները
2. Գինազերչակ
3. Հողի սպտազորման ընկերական ձևերը
4. Դեմի հողերի մշակությունը
5. Մեղունների խնամքը
6. Խոզարուծություն
7. Հողի պարարտացումը
8. Ինչպես են ցանում բամբակը շարքացանով



ՀՀ Ազգային գրադարան



NL0196635

9122 6 5 407.

УДВОИТЕЛНА
ИНСТИТУТА
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академия Наук
СССР

ԴԻՄԵԼ՝ ՅԵՔԵԼԱՆ, Հողժողովմատ, հրատարակչ
[ժյան, Պետիրատի կենտրոնակ
յեզ գնվառական գրախանու
ներին, Գալնոդրածիններին.
